# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Արդյունքները շոշափելի են



Հայաստանում ամերիկյան համալսարանը 20 տարեկան է

Փոխվում են ժամանակները, փոխվում են եւ չափանիշներն ու սկզբունքները. եթե ուղիղ 20 տարի առաջ աշխատանքներ էին տարվում Հայաստանում ամերիկյան համալսարանի հիմքերը դնելու ուղղությամբ, ապա այսօր համալսարանը կայացել է, ավելին, հասցրել է սահմանել հստակ որակական չափանիշներ: Այս տարի էլ տոնելով 20—ամյակը, փորձում է նոր բարձունքներ հաղթահարել եւ ոչ հեռավոր ապագան կանխատեսել: Կանխատեսումների արդյունքները, ի դեպ, մասնագետներին գոհացնում են: ՀԱՀ ներկայացուցիչները հավաստիացնում են, որ ասենք 10 տարի հետո հաստատությունն առավել մեծ միջազգայնացում, բազմապատկված թվաքանակով ուսանողական անձնակազմ, ընդլայնված դասախոսական կազմ է ունենալու: Վերջիններիս էլ անցնող տարիների ընթացքում փորձելու են ներգրավել հանրային նպատակ ունեցող հետազոտություններում: Ապագայի անելիքներն առավել շոշափելի դարձնելու համար մշակվում է առաջիկա 6 տարիների ռազմավարական ծրագիր: Այն ներառելու է բակալավրիատին հավասարազոր մի աստիճան, որը համալսարանում կմեկնարկի առաջիկա տարիներին: Դա թույլ կտա ընդունել տարեկան 4 անգամ ավելի ուսանողներ, ավելի մեծ ուսանողական անձնակազմ ձեւավորել եւ աջակցություն ունենալ մեր երկրի զարգացման հարցում: Ներկա դրությամբ՝ կրթական այդ հաստատությունն ունի 400 ուսանող, 4 տարի հետո նախատեսվում է կրթություն տալ 1200 բակալավրիատի ուսանողի եւ 400 մագիստրոսի:

«Հույս ունեմ՝ համալսարանի մտավոր սեփականությունը կնպաստի հայաստանյան փոքր բիզնեսի առաջխաղացմանը՝ Հայաստանի տնտեսությունն առավել կենսունակ դարձնելով»,–երեկ հրավիրված ասուլիսի ժամանակ հույս հայտնեց Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Բրյուս Պողոսյանը: Այս հարցում հաստատության շրջանավարտներն իրենց արդյունավետությունն արդեն ապացուցել են: Նրանց չնչին մասն է գործազուրկ: 78—80 տոկոսն աշխատում է Հայաստանում, մի մասն էլ միջազգային այս կամ այն կառույցում Հայաստանի ներկայացուցիչներն են:

Ահա թե ինչու հաստատության ներկայացուցիչները բարձրաձայնում են, որ ֆինանսական աջակցության ծրագրերն ընդլայնելով մուտք են ապահովում նաեւ կրթվելու ցանկություն ունեցող ոչ վճարունակ երիտասարդներին: Համալսարանի միջին վարձավճարը տարեկան 1 մլն դրամ է, բայց սոցիալական վիճակով, առաջադիմությամբ պայմանավորված, ամերիկյանի ուսանողների շուրջ 40 տոկոսին օգնություն եւ կրթաթոշակներ են հատկացվում՝ որոշ դեպքերում վարձի շուրջ 90 տոկոսի չափով:

«Մեր ուսանողները որոշակի առավելություն ունեն: Նրանք ծանոթանում են ոչ միայն հայաստանյան, այլեւ արեւմտյան մոտեցումներին ու մեթոդներին: Սա նրանց մեծ առավելություն է տալիս»,–ընդգծեց ՀԱՀ հիմնադիր եւ պրովոստ Արմեն Տեր—Կյուրեղյանը:

«Ամերիկյան համալսարանը Հայաստանում շատ կարեւոր գործ է անում»,–վերհիշելով համալսարանի հիմնադրման պատմությունը եզրահանգեց ՀԱՀ հիմնադիր եւ պատվավոր նախագահ Միհրան Աղբաբյանը: Համալսարանի ստեղծման հիմքում Գյումրիի վնասված դպրոցների փոխարեն Հայաստանում նոր համալսարան ունենալու մտադրությունն է եղել: Գաղափարը կյանքի կոչվեց եւ որոշակի ճանաչում ու առավելություն բերեց մեր հանրապետությանը: Բանն այն է, որ Կալիֆորնիայի համալսարանը միայն ամերիկյան համալսարանի հետ է կնքել համաձայնագիր՝ ակադեմիական ղեկավարման եւ ուսումնական

ծրագրերի ուղղորդման վերաբերյալ: Այս եւ ՀԱՀ—ի մյուս առավելություններն ու դրական կողմերն ընդգծող փաստերը, անտարակույս, արտացոլվել են նաեւ կառույցի պատմության էջերում: Համալսարանի պատմության գիրքն արդեն լույս է տեսել, նրա մասին պատմող ֆիլմն էլ կցուցադրվի, դրան զուգահեռ նաեւ մի շարք միջոցառումներ կանցկացվեն «Հայաստանի ամերիկյան համալսարանի զարգացման քսանամյակ» կրթության փառատոնի (սեպտեմբերի 26—հոկտեմբերի 1) շրջանակներում:

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**